



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

24 հուլիսի 2026 թվականի թիվ 1860-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ԵՐԿՐԱԶԱՓԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԻ, ԳԾԱՅԻՆ ՉԱՓԵՐԻ ԵՎ ՄԱԿԵՐԵՍԻ ՈՒՂՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.04.2021թ. N 698-Ն որոշմամբ, հաշվի առնելով, որ Սևան համայնքի հերթապահ էլ. քարտեզում առկա են անճշտություններ, որի հետևանքով անհրաժեշտություն է առաջացել փոփոխել՝ սեփականության իրավունքով քաղ. էղվարդ Հովսեփյանին պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Բաֆֆու փողոց, 3-րդ նրբանցք թիվ 17 հասցեում գտնվող 0.072հա մակերեսով հողամասի /վկայական՝ N 18122025-05-0045/ գծային չափերը, երկրաչափական պատկերը, տեղադիրքը և մակերեսը, հիմք ընդունելով որակավորում ունեցող անձի կողմից կատարված չափագրությունների արդյունքները, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք-1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագիծը՝ **որոշում եմ.**

1. Ուղղել և հաստատել՝ Սևան համայնք, ք. Սևան, Բաֆֆու փողոց, 3-րդ նրբանցք թիվ 17 հասցեում գտնվող անշարժ գույքի տեղադիրքը, գծային չափերը, երկրաչափական պատկերը և մակերեսը:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ

ԱՐԹՈՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ



2026 թվականի հուլիսի 24
ք.Սևան

2024



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

24 հուլիսի 2026 թվականի թիվ 1861-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱՍՄԻԿ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ ՄԱՍԻՆ

Քննելով քաղաքացի Հասմիկ Սիմոնյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթի նյութերը՝ պարզեցի. համաձայն ՀՀ ՇՄՆ Էկոպարեկային ծառայության կողմից կազմված N 272 արձանագրության՝ 05.12.2006թ. N 623 պայմանագրով կառուցապատման իրավունքով Հասմիկ Սիմոնյանին՝ ք. Սևան, Հանգստի գոտու, 4-րդ փողոց թիվ 2 / 8 հասցեում տրամադրված հողատարածքում առկա են ինքնական շինություններ՝ բետոնյա հիմքերով երեք վագոն տնակ, քարից կառուցված պարիսպ և սանհանգույց: Հարուցված վարչական վարույթի շրջանակներում Հասմիկ Սիմոնյանը պատշաճ ծանուցվել է: 23.01.2026 թվականին Հասմիկ Սիմոնյանի լիազորված անձ Վահագն Գրիգորյանը Սևանի համայնքապետին ներկայացրել է պարզաբանում: Ըստ այդ պարզաբանման՝ քաղաքացի Հասմիկ Սիմոնյանին հատկացված 600 քմ հողատարածքում գտնվող շինությունները կառուցվել են օրենքով սահմանված կարգով: Պարզաբանմանը կից ներկայացվել է 19.09.2008 թվականի N33 շինարարության թույլտվությունը, 18.03.2008թվականի N15 ճարտարապետահատակագծային առաջադրանքը, տեղեկանք ավարտված շենք-շինության մասին՝ տրված Սևանի քաղաքապետի կողմից, 18.11.2008 թվականի շինությունների պետական գրանցման վկայականը, 10.09.2008թ. N Փ-479, 19.05.2008թ. N ԲՓ-92 փորձաքննության եզրակացությունները: Շինարարական աշխատանքների հետ կապված խախտումները հայտնաբերելու համար անհրաժեշտ էր կատարել փորձագիտական (մասնագիտական) ուսումնասիրություններ: Այդ նպատակով Սևանի համայնքի ղեկավարի՝ 2026 թվականի մարտի 2-ի թիվ 434-Ա որոշմամբ՝ նշանակվեց փորձագիտական (մասնագիտական) փորձաքննություն: Համաձայն եզրակացության՝ տարածքում առկա են շարժական տնակներ՝ 2 հատ՝ 9x3մ, 1 հատ՝ 9x3մ չափերով: Դրանց հիմքեր են հանդիսանում քարց շարված պատերը՝ 0.18 մ հաստությամբ և 0.8 մ բարձրությամբ, որոնց ընդհանուր երկարությունը կազմում է 78 մետր, իսկ մակերեսը՝ 14.04 քմ: Տնակների առաջնամասում առկա են բետոնյա հարթակներ՝ 22.71 քմ ընդհանուր մակերեսով: Հողամասում առկա է նաև տուֆից շարված սանհանգույց՝ 2.2x2.33 մ չափերով: Հողամասի ճակատային մասում կառուցված է պարիսպ՝ տուֆ քարից, 18.22 մ երկարությամբ և 0.18 մ հաստությամբ: Ինչ վերաբերվում է կառուցված շինությունների բացարձակ նիշերին, ապա նրանք գտնվում են 1906.3-ից մինչև 1907.25 բացարձակ նիշերի վրա: Տարածքի կառուցապատման նախագիծն իրականացվել է «ԳԱՐՄԵՀ» ՍՊԸ-ի կողմից: Տեղանքում իրականացված շինարարական և նախագծային լուծումների միջև առկա են անհամապատասխանություններ: Մասնավորապես՝ շարժական տնակների տակ նախատեսված է 0.6x0.6x0.6մ չափերով բետոնե

2025

հենարաններ, սակայն տեղում առկա են քարից շարված պատեր: Տարածքում քարից շարված պարիսպը, սանհանգույցը, տնակների առջև կառուցված բետոնյա հարթակներն իրականացվել են ինքնակամորեն: Օրենքով սահմանված կարգով հիմական շինությունների կառուցում չի թույլատրվում առանց համապատասխան փաստաթղթերի: Վարչական գործի քննությանը մասնակցելու համար քաղաքացին պատշաճ ծանուցվել է, սակայն չի ներկայացել գործի քննությանը: Հիմնավորված է համարվում նաև այն փաստը, որ Հասմիկ Սիմոնյանը խախտել է ՀՀ կառավարության՝ 2001 թվականի սեպտեմբերի 24-ի N 896-Ն, 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշումների, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 6-րդ և 23-րդ հոդվածի պահանջները, ինքնակամ կառուցել է շինություններ՝ բետոնյա հիմքերով երեք վագոն տնակ, քարից կառուցված պարիսպ և սանհանգույց: Օրենքով սահմանված կարգով հարուցված վարույթի շրջանակում հիմնավորվում է այն փաստը, որ նշված շինությունները կառուցվել են պետական սեփականություն հանդիսացող՝ ««Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին մշտական և անհատույց օգտագործման իրավունքով պատկանող հողատարածքում: Այդ հողատարածքը հանդիսանում է ՀՀ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածին պատկանող պետական սեփականության հողատարածք: Համաձայն ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածի պահանջների «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածին պատկանող հողատարածքներում ինքնակամ շինություններն օրինականացման ենթակա չեն և պետք է ապամոնտաժվեն: Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետի, 42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներով, ինչպես նաև ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, ՀՀ «Հողային օրենսգրքի» 43-րդ հոդվածի 2-րդ մասի, 60-րդ հոդվածի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 6 և 23 հոդվածների, 26-րդ հոդվածի ե) կետի, ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի 37-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի 912-Ն որոշման 2-րդ կետի, ՀՀ կառավարության 18.12.2008 թվականի 1563-Ն որոշման պահանջներով, **որոշում եմ.**

1. Հանձնարարել Սևանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին՝ ««Սևան» Ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ու հասարակական կարգի պահպանության ծառայության օժանդակությամբ ապամոնտաժել Հասմիկ Սիմոնյանին կառուցապատման իրավունքով տրամադրված հողատարածքում առկա ինքնակամ շինությունները՝ բետոնյա հիմքերով երեք վագոն տնակը, քարից կառուցված պարիսպը և սանհանգույցը :
2. Առաջարկել ՀՀ ՆԳՆ ՀՈԳՎ Սևանի բաժնի պետին՝ ապահովել հասարակական կարգի պահպանությունը վարչական հարկադրանքի կիրառման ժամանակ:
3. Պահանջել քաղաքացի Հասմիկ Սիմոնյանից տարածքի կառուցապատումն իրականացնել՝ խստիվ պահպանելով ՀՀ Քաղաքաշինական օրենսդրության պահանջները:
4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Սևան համայնքի ղեկավարին 15 օրյա ընթացքում կամ ՀՀ վարչական դատարան 2 ամսվա ընթացքում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԽՈՂ՝  ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հուլիսի 24
 ք.Սևան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

24 հուլիսի 2026 թվականի թիվ 1862-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³ հոդվածով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք-1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա Սևան բնակավայրի գոտևորման հատակագիծը և քաղ. Արմեն Գասպարյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ սեփականության իրավունքով Արմեն Գասպարյանին պատկանող ավտոտնակի զբաղեցրած՝ ք. Սևան, Ս. Սևանեցու փողոց թիվ 4 / 51 հասցեում գտնվող, Արմեն Գասպարյանին վարձակալության իրավունքով պատկանող 0.0024հա մակերեսով հողատարածքը /կադաստրային ծածկագիր՝ 05-004-0013-0037, վկայական՝ N 29112019-05-0066/ ճանաչել համայնքային սեփականություն, համապատասխանեցնել ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք-1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագծին՝ բնակավայրերի՝ նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման՝ գործառնական նշանակության հողատարածքի:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05. 01. 2026թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ

ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հուլիսի 24
ք.Սևան



2027



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

24 հուլիսի 2026 թվականի թիվ 1863-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³ հոդվածով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք-1 միկրոոեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա Սևան բնակավայրի գոտևորման հատակագիծը՝ **որոշում են**.

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 0.00425 հա մակերեսով հողամասը /ք. Սևան/ ճանաչել համայնքային սեփականություն, համապատասխանեցնել ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք-1 միկրոոեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա Սևան բնակավայրի գոտևորման հատակագծին, տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 139 / 7 հողամաս հասցե:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05.01.2026թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

(Handwritten signature)



ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հուլիսի 24
ք.Սևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

24 հուլիսի 2026 թվականի թիվ 1864-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. «Ինքնական կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման 34-36 կետերի պահանջների, հաշվի առնելով քաղ. Լորենտա Բադալյանի դիմումը՝ Սևան համայնք, ք. Սևան, Խաղաղության փողոց թիվ 7 / 31 հասցեում կառուցված 24.47քմ մակերեսով ավտոտնակը, 10.36քմ մակերեսով նկուղը, 24.47քմ մակերեսով զբաղեցրած հողատարածքն ուղղակի գործարքով իրեն վաճառելու մասին, նկատի ունենալով, որ դրանք ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողատեսք չեն հանդիսանում, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Խաղաղության փողոց թիվ 7 / 31 հասցեում գտնվող, Սևան համայնքի ղեկավարի՝ 29.06.2026թ. թիվ 1628-Ա որոշմամբ օրինական և համայնքային սեփականություն ճանաչված, 09.07.2026թ. պետական գրանցում ստացած 24.47քմ մակերեսով ավտոտնակը՝ 1քմ՝ 1673 դրամ, 10.36քմ մակերեսով նկուղը՝ 1քմ՝ 3346 դրամ, զբաղեցրած 24.47քմ մակերեսով հողատարածքը՝ 1քմ՝ 2887.5 դրամ, ուղղակի գործարքի միջոցով վաճառել ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 34-րդ կետով սահմանված գնման նախապատվությունը ստանալուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան դիմում ներկայացրած քաղ. Լորենտա Բադալյանին:
2. Քաղ. Լորենտա Բադալյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր և սահմանել, որ առուվաճառքի հետ կապված ծախսերն իրականացվում են գնորդի հաշվին:
3. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ

ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հուլիսի 24
ք.Սևան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

24 հուլիսի 2026 թվականի թիվ 1865-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման 34-36 կետերի պահանջների, հաշվի առնելով քաղ. Գառնիկ Ստեփանյանի դիմումը՝ Սևան համայնք, ք. Սևան, Հրազդանի փողոց թիվ 42 / 18 հասցեում կառուցված 27.8 քմ մակերեսով ավտոտնակը և 27.8 քմ մակերեսով զբաղեցրած հողատարածքն ուղղակի գործարքով իրեն վաճառելու մասին, նկատի ունենալով, որ դրանք ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողատեսք չեն հանդիսանում, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Հրազդանի փողոց թիվ 42 / 18 հասցեում գտնվող, Սևան համայնքի ղեկավարի՝ 26.04.2026 թ. թիվ 1276-Ա որոշմամբ օրինական և համայնքային սեփականություն ճանաչված, 21.07.2026թ. պետական գրանցում ստացած 27.8 քմ մակերեսով ավտոտնակը՝ 1քմ՝ 1673 դրամ, զբաղեցրած 27.8 քմ մակերեսով հողատարածքը՝ 1քմ՝ 2887.5 դրամ, ուղղակի գործարքի միջոցով վաճառել ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 34-րդ կետով սահմանված գնման նախապատվությունը ստանալուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան դիմում ներկայացրած քաղ. Գառնիկ Սարգսի Ստեփանյանին:
2. Գառնիկ Սարգսի Ստեփանյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր և սահմանել, որ առուվաճառքի հետ կապված ծախսերն իրականացվում են գնորդի հաշվին:
3. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

ԱՐԹՈՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հուլիսի 24
ք.Սևան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

24 հուլիսի 2026 թվականի թիվ 1867-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման 34-36 կետերի պահանջների, հաշվի առնելով քաղաքացի Մանուշակ Գալստյանի դիմումը Սևան համայնք, գ. Գագարին, Հ. Քոչարի թիվ 1 / 1 հասցեում կառուցված 18.4 քմ մակերեսով ավտոտնակը, զբաղեցրած 18.4 քմ մակերեսով հողատարածքն ուղղակի գործարքով իրեն վաճառելու մասին, նկատի ունենալով, որ դրանք ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողատեսք չեն հանդիսանում, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, գ. Գագարին, Հ. Քոչարի թիվ 1 / 1 հասցեում գտնվող Սևան համայնքի ղեկավարի 03.07.2026թ. թիվ 1678-Ա, 09.07.2026թ. 1724-Ա որոշումներով օրինական և համայնքային սեփականություն ճանաչված, 22.07.2026թ. պետական գրանցում ստացած 18.4 քմ մակերեսով ավտոտնակը՝ 1քմ՝ 1209 դրամ, զբաղեցրած 18.4 քմ մակերեսով հողատարածքը՝ 1քմ՝ 1221 դրամ ուղղակի գործարքի միջոցով վաճառել ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 34-րդ կետով սահմանված գնման նախապատվությունը ստանալուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան դիմում ներկայացրած քաղ. օտարել Մանուշակ Հրանտի Գալստյանին :
2. Քաղաքացի Մանուշակ Հրանտի Գալստյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր և սահմանել, որ առուվաճառքի հետ կապված ծախսերն իրականացվում են գնորդի հաշվին:
3. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հուլիսի 24
ք.Սևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

24 հուլիսի 2026 թվականի թիվ 1866-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. «Ինքնական կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման 34-36 կետերի պահանջների, հաշվի առնելով քաղ. Հայկ Զաքարյանի դիմումը՝ Սևան համայնք, ք. Սևան, Խաղաղության փողոց թիվ 7 / 24 հասցեում կառուցված 25.1 քմ մակերեսով ավտոտնակը, 25.1 քմ մակերեսով նկուղը, 1.29 քմ մակերեսով ծածկը և 25.1 քմ մակերեսով զբաղեցրած հողատարածքն ուղղակի գործարքով իրեն վաճառելու մասին, նկատի ունենալով, որ դրանք ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողատեսք չեն հանդիսանում, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Խաղաղության փողոց թիվ 7 / 24 հասցեում գտնվող, Սևան համայնքի ղեկավարի՝ 18.05.2026թ. թիվ 1186-Ա որոշմամբ օրինական և համայնքային սեփականություն ճանաչված, 13.07.2026թ. պետական գրանցում ստացած 25.1 քմ մակերեսով ավտոտնակը՝ 1քմ՝ 1673 դրամ, 25.1 քմ մակերեսով նկուղը՝ 1քմ՝ 3346 դրամ, 1.29 քմ մակերեսով ծածկը՝ 1քմ՝ 3346 դրամ, զբաղեցրած 25.1 քմ մակերեսով հողատարածքը՝ 1քմ՝ 2887.5 դրամ, ուղղակի գործարքի միջոցով վաճառել ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 34-րդ կետով սահմանված գնման նախապատվությունը ստանալուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան դիմում ներկայացրած քաղ. Հայկ Մայիսի Զաքարյանին:
2. Քաղ. Հայկ Մայիսի Զաքարյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր և սահմանել, որ առուվաճառքի հետ կապված ծախսերն իրականացվում են գնորդի հաշվին:
3. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հուլիսի 24
ք.Սևան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

24 հուլիսի 2026 թվականի թիվ 1868-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³ հոդվածով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք-1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա Սևան բնակավայրի գոտևորման հատակագիծը՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 3.26819 հա մակերեսով հողամասը /գ. Լճաշեն/ ճանաչել համայնքային սեփականություն, տրամադրել Սևան համայնք, գ. Լճաշեն, Պլտինի փողոց թիվ 4 / 1 հողամաս հասցե:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05.01.2026թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ



2026 թվականի հուլիսի 24
ք.Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

24 հուլիսի 2026 թվականի թիվ 1869-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղաքացի Արթուր Ավետիսյանի դիմումը՝ Սևան համայնք, գ. Նորաշեն, 1-ին փողոց, 1-ին փակուղի թիվ 4 բնակելի տուն հասցեում գտնվող անշարժ գույքը /վկայական՝ 22052026-05-0036/ առանձնացնելու և առանձնացված հատվածների համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, գ. Նորաշեն, 1-ին փողոց, 1-ին փակուղի, թիվ 4 բնակելի տուն հասցեում գտնվող 0.8005 հա մակերեսով անշարժ գույքը, համաձայն ներկայացվող հատակագծերի, բաժանել 2 միավոր գույքի և տրամադրել հասցեներ՝
 - 1) առաջին միավոր գույքի՝ 0.66000 հա մակերեսով անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, գ. Նորաշեն, 1-ին փողոց, 1-ին փակուղի թիվ 4 բնակելի տուն հասցե;
 - 2) երկրորդ միավոր գույքի՝ 0.14000 հա մակերեսով անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, գ. Նորաշեն, 1-ին փողոց, 1-ին փակուղի թիվ 4 / 1 հողամաս հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ



2026 թվականի հուլիսի 24
ք. Սևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

24 հուլիսի 2026 թվականի թիվ 1870-Ա


ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱԶՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. N 2387-Ն, 18.05.2006թ. N 731-Ն որոշումներով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 3-րդ, 33-րդ կետերով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³ հոդվածով, հիմք ընդունելով քաղ. Սաշա Մկրտիչի Մինասյանի դիմումը՝ ք. Սևան, Ս. Սևանեցու փողոցի արևմտյան հատվածում, ավտոտնակների շարքում՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա ինքնական կառուցված 30.00 քմ մակերեսով ավտոտնակն օրինականացնելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ շինությունը կառուցված է համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա, որի նկատմամբ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներ չկան, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում են.**

1. Սաշա Մինասյանի կողմից՝ ք. Սևան, Ս. Սևանեցու փողոցի արևմտյան հարևանությամբ՝ ավտոտնակների շարքում՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա 1984թ. ինքնական կառուցված 30.00 քմ մակերեսով ավտոտնակը /ներքին մակերեսը՝ 29.00 քմ/ և զբաղեցրած 30.00 քմ մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն:
2. Սաշա Մինասյանի կողմից ինքնական կառուցված 30.00 քմ մակերեսով ավտոտնակը /հաշվառման տեղեկանք՝ 20268AEVBY/՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Ա. Գրիբոյեդովի փողոց թիվ 3 / 89 ավտոտնակ հասցե:
3. Նկատի ունենալով, որ թույլ է տրվել ինքնակամություն, ուստի ինքնական կառույցի օրինականացման ծախսերն իրականացվում են ինքնական կառույցն իրականացնողի միջոցներով, պետական գրանցման, այդ թվում՝ համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05. 01. 2026թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:

4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերի ամբողջ գումարը քաղաքացու կողմից Սևան համայնքի բյուջե վերականգնելուց հետո:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝



ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ



2026 թվականի հուլիսի 24
ք.Սևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

24 հուլիսի 2026 թվականի թիվ 1871-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. N 731-Ն որոշմամբ, 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 9-րդ, 10-րդ, 11-րդ 18-րդ կետերով, հիմք ընդունելով քաղ. Վարդան Խաչատրյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Սևան համայնք, գ. Զովաբեր առանձնատուն հասցեում գտնվող 0.150հա մակերեսով հողատարածքում սեփականատիրոջ կողմից ինքնակամ կատարված շինարարական աշխատանքներ, օրինականացնելու մասին, նկատի ունենալով որ շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Սեփականության իրավունքով Վարդան Ալբերտի Խաչատրյանին պատկանող, Սևան համայնք, գ. Զովաբեր առանձնատուն հասցեում գտնվող 0.150հա մակերեսով հողատարածքում սեփականատիրոջ կողմից 2020թ. ինքնակամ կառուցված 196.54քմ մակերեսով բնակելի տունը /ներքին մակերեսը՝ 164.83քմ/ և 100.38քմ մակերեսով ձեղնահարկը /ներքին մակերեսը՝ 76.88քմ/ և 12.29քմ մակերեսով բաց պատշգամբը ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 2026LKUEQG/՝ տրամադրելով Սևան համայնք, գ. Զովաբեր, 5-րդ փողոց, 2-րդ նրբանցք թիվ 8 բնակելի տուն հասցե՝ համայնքի բյուջե մուծելով յուրաքանչյուր օրինականացվող 1քմ շինության համար՝ 874 դրամ:
2. Սույն որոշման ընդունման օրվանից սահմանված գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում՝ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հուլիսի 24
ք.Սևան



2037



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

24 հուլիսի 2026 թվականի թիվ 1872-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Արծրուն Զաքարյանի դիմումը՝ Գեղարքունիք, գ. Գեղամավան, բնակելի տուն /վկայական՝ 2452617, տրված՝ 20.06.2003թ./ և Գեղարքունիք, գ. Գեղամավան, տնամերձ /վկայական՝ 939884, տրված՝ 02.07.2002թ./ հասցեներում գտնվող անշարժ գույքերի համար նոր հասցեներ տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Գեղարքունիք, գ. Գեղամավան, բնակելի տուն հասցեում գտնվող անշարժ գույքի /վկայական՝ 2452617, տրված՝ 20.06.2003թ./ համար տրամադրել Սևան համայնք, գ. Գեղամավան, 2-րդ փողոց թիվ 10 բնակելի տուն հասցե:
2. Գեղարքունիք, գ. Գեղամավան, տնամերձ հասցեում գտնվող անշարժ գույքի /վկայական՝ 939884, տրված՝ 02.07.2002թ./ համար տրամադրել Սևան համայնք, գ. Գեղամավան, 2-րդ փողոց, 15-րդ նրբանցք թիվ 4 հողամաս հասցե:
3. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝



ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հուլիսի 24
ք. Սևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

24 հուլիսի 2026 թվականի թիվ 1873-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության՝ 26.05.2016թ. N550-Ն որոշմամբ, հիմք ընդունելով քաղաքացի Գրիշա Անտոնյանի դիմումը՝ Գեղարքունիքի մարզ, Վարսեր համայնք, Սևան-Երևան 42 հասցեում գտնվող անշարժ գույքի /վկայական՝ 26032015-05-0019/ զբաղեցրած 0.09 հա մակերեսով հողատարածքն ընդլայնելու մասին, հաշվի առնելով, որ նշված հողատարածքը չի հանդիսանում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողատարածք, **որոշում եմ.**

1. Գրիշա Հրաչիկի Անտոնյանին պատկանող, Գեղարքունիքի մարզ, Վարսեր համայնք, Սևան-Երևան 42 հասցեում գտնվող հողամասի զբաղեցրած 0.09 հա մակերեսով հողատարածքն ընդլայնել 0.9 հա մակերեսով /հասցե՝ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գյուղ Վարսեր, Երևան-Սևան մայրուղի 57-58 կմ 39 հողամաս, վկայական՝ 14072026-05-0020/՝ ուղղակի վաճառքի կարգով օտարելով Գրիշա Հրաչիկի Անտոնյանին՝ հողի կադաստրային արժեքը՝ 1քմ՝ 792 դրամ, վճարելու պայմանով:
2. Սույն որոշումը ենթակա է հողի պետական գրանցման հողի կադաստրային արժեքը մուծելուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԽՆՈՂ՝

ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ



2026 թվականի հուլիսի 24
ք.Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

24 հուլիսի 2026 թվականի թիվ 1874-Ա

**ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2024 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 2867-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 2024 թվականի դեկտեմբերի 24-ի «Հողատարածքը համայնքային սեփականություն ճանաչելու մասին» N 2867-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
 - 1) որոշման նախաբանում՝ «իրեն պատկանող» բառերի փոխարեն կարդալ «Սամվել, Մարինե, Արմինե և Սաթենիկ Խալաֆյաններին պատկանող» բառերը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝



ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հուլիսի 24
ք.Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

24 հուլիսի 2026 թվականի թիվ 1875-Ա

**ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 18.06.2026Թ. թիվ 1519-Ա
ՈՐՈՇՈՒՄԸ ԵՎ 19.06.2026Թ. N131 ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆ
ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37 -րդ հոդվածի՝ **որոշում եմ.**

1. Ուժը կորցրած ճանաչել Սևան համայնքի ղեկավարի՝ 18.06.2026թ. « Թույլտվություն տրամադրելու մասին» 1519-Ա որոշումը և 19.06.2026թ. N131 ոգելից խմիչքի վաճառքի թույլտվությունը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝



Սարգիս ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հուլիսի 24
ք.Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

24 հուլիսի 2026 թվականի թիվ 1876-Ա

**ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻԻ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՅԻՍԻ 29-Ի N 1334-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 2026 թվականի մայիսի 29-ի «Հողատարածքն ուղղակի վաճառքի կարգով օտարելու մասին» N 1334-Ա որոշման նախաբանում կատարել հետևյալ լրացումը՝
 - 1) «Զենֆերա Ծերունի Կյուրեղյանի դիմումը» բառերից հետո կարդալ « և «Գեղարքունիքի մարզ» նոտարական տարածքի նոտար Վարդուհի Բաբիկի Սարոյանի կողմից 06.05.2026թ. վավերացված ժառանգության իրավունքի վկայագիրը» բառերը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝



ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հուլիսի 24
ք.Սևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

27 հուլիսի 2026 թվականի թիվ 1877-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք քաղաքացի Ալիկ Մալխասյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Մ. Նալբանդյան փողոց թիվ 2 / 2 հողամաս /վկայական՝ 14072026-05-0039/, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 123 / 1 հողամաս /վկայական՝ 10072026-05-0083/, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 121 տուն /վկայական՝ N 11072026-05-0005/ հասցեներում գտնվող անշարժ գույքերը միավորելու և միավորված անշարժ գույքի համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Մ. Նալբանդյան փողոց թիվ 2 / 2 հողամաս /վկայական՝ 14072026-05-0039/, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 123 / 1 հողամաս /վկայական՝ 10072026-05-0083/, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 121 տուն /վկայական՝ N 11072026-05-0005/ հասցեներում գտնվող անշարժ գույքերը միավորել և տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 121 բնակելի տուն հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2026 թվականի հուլիսի 27
ք.Սևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

27 հուլիսի 2026 թվականի թիվ 1878-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման և հիմք ընդունելով քաղ. Աղվան Սաֆարյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Աղվան Սաֆարյանին տրամադրել շինարարության թույլտվություն Սևան համայնք, ք. Սևան, Սայաթ-Նովայի փողոց թիվ 5 / 14 հասցեում գտնվող հողատարածքում հասարակական սպասարկան օբյեկտի կառուցման համար:
2. Աղվան Սաֆարյանը շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Սևանի համայնքապետարանին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:
3. Աղվան Սաֆարյանը պարտավոր է շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո՝ բայց ոչ ուշ, քան շինարարության թույլտվության ժամկետը լրանալուց 30 օր առաջ, դիմել Սևան համայնքի ղեկավարին՝ ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար, հակառակ դեպքում՝ կենթարկվի վարչական պատասխանատվության օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հուլիսի 27
ք.Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

27 հուլիսի 2026 թվականի թիվ 1879-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնք, գյուղ Լճաշեն, Սևան համայնք, գյուղ Լճաշեն, Սևան համայնք, գյուղ Լճաշեն հասցեներում գտնվող անշարժ գույքերը /կադաստրային ծածկագիր՝ 05-040-0251-0086, 05-040-0251-0087 և 05-040-0251-0083/ միավորել:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05. 01. 2026թ. N 2-Ա որոշման 3-րդ կետի:
3. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՍԱՐԳՈՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հուլիսի 27
ք.Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

27 հուլիսի 2026 թվականի թիվ 1880-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան Ղ. Ալիշանի փողոց թիվ 2 հասցեում գտնվող հողամասի համար տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Ղ. Ալիշանի փողոց թիվ 2 / 8 հողամաս հասցե:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05. 01. 2026թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
3. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2026 թվականի հուլիսի 27
ք.Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

27 հուլիսի 2026 թվականի թիվ 1881-Ա

**ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 5-Ի N 1418-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 2026 թվականի հունիսի 5-ի «Ինքնակամ կառուցված շինությունն օրինականացնելու և համայնքային սեփականություն ճանաչելու մասին» 1418-Ա որոշման 2-րդ կետում կատարել հետևյալ փոփոխություն՝
 - 1) «Խ. Աբովյան փողոց թիվ 3 / 31 հողամաս հասցե» բառերի փոխարեն կարդալ «Խ. Աբովյան փողոց թիվ 3 / 31 ավտոտնակ հասցե» բառերը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հուլիսի 27
ք. Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

27 հուլիսի 2026 թվականի թիվ 1882-Ա

**ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒԼԻՍԻ 14-Ի N 1759-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 2026 թվականի հուլիսի 14-ի «Բնակելի նշանակության շինությունները սեփական գույք ճանաչելու մասին» N 1759-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
 - 1) որոշման նախաբանում՝ «ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն և ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշումների պահանջներով» բառերի փոխարեն կարդալ «ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 11-րդ կետի գ) ենթակետի պահանջներով» բառերը;
 - 2) որոշման 4-րդ կետում՝ «ճանաչել ինքնակամ» բառերից հետո կարդալ «/հաշվառման տեղեկանք՝ 2026AXYUGP/» բառերը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հուլիսի 27
ք. Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

27 հուլիսի 2026 թվականի թիվ 1883-Ա

**ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 25-Ի N 1600-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 2026 թվականի հունիսի 25-ի «Հողատարածքը համայնքային սեփականություն ճանաչելու մասին» N 1600-Ա որոշման 1-ին կետը կարդալ նոր խմբագրությամբ՝
- 1) «Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 0.00750հա մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն, համապատասխանեցնել ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք-1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագծին՝ բնակավայրերի՝ նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման՝ գործառնական նշանակության հողատարածքի՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Խաղաղության փողոց թիվ 25 / 103 հողամաս հասցե»:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հուլիսի 27
ք.Սևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

27 հուլիսի 2026 թվականի թիվ 1884-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 1-Ի N 1400-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 2026 թվականի մայիսի 1-ի «Ինքնակամ կառուցված շինությունն օրինականացնելու և համայնքային սեփականություն ճանաչելու մասին» 1400-Ա որոշման 1-ին կետում կատարել հետևյալ լրացումը՝
 - 1) «զբաղեցրած 17.3քմ մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն» բառերից հետո կարդալ «համապատասխանեցնել ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք-1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագծին՝ բնակավայրերի՝ նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման՝ գործառնական նշանակության» բառերը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՄԱՐԳՐԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հուլիսի 27
ք.Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

27 հուլիսի 2026 թվականի թիվ 1885-Ա

**ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՅԻՍԻ 20-Ի N 1214-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 2026 թվականի մայիսի 20-ի «Ինքնակամ կառուցված շինությունն օրինականացնելու և համայնքային սեփականություն ճանաչելու մասին» N 1214-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
 - 1) որոշման նախաբանում և 2-րդ կետում՝ «35. 88քմ մակերեսով ավտոտնակը» բառերի փոխարեն կարդալ «28. 4քմ մակերեսով ավտոտնակը» բառերը;
 - 2) որոշման 1-ին կետում՝ «35.88քմ մակերեսով ավտոտնակը /ներքին մակերեսը՝ 30.89քմ/ և զբաղեցրած 35.88քմ մակերեսով հողատարածքը» բառերի փոխարեն կարդալ «28.4քմ մակերեսով ավտոտնակը /ներքին մակերեսը՝ 26.06քմ/ և զբաղեցրած 28.4քմ մակերեսով հողատարածքը» բառերը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հուլիսի 27
ք.Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

27 հուլիսի 2026 թվականի թիվ 1886-Ա

**ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒԼԻՍԻ 14-Ի N 1757-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 2026 թվականի հուլիսի 14-ի «Հողամասի գործառնական նշանակությունը փոփոխելու մասին» N 1757-Ա որոշման 2-րդ կետը կարդալ հետևյալ խմբագրությամբ՝
 - 1) «Սևան համայնք, գյուղ Դդմաշեն, 1-ին փողոց թիվ 4 հասցեում գտնվող, սեփականության իրավունքով Սևակ Ստեփանյանին պատկանող հողատարածքում գտնվող 141.16քմ մակերեսով շինության գոծառական նշանակությունը փոխել սպասարկման օբյեկտի»:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հուլիսի 27
ք.Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

27 հուլիսի 2026 թվականի թիվ 1887-Ա

**ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒԼԻՍԻ 23-Ի N ՆԹ-9458-26 ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Ուժը կորցրած ճանաչել Սևան համայնքի ղեկավարի՝ 2026 թվականի հուլիսի 23-ի N ՆԹ-9458-26 նախագծման թույլտվությունը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2026 թվականի հուլիսի 27
ք.Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ


27 հուլիսի 2026 թվականի թիվ 1888-Ա

**ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով «Պետական գույքի կառավարման կոմիտե» ՊՄ-ի տնօրեն Մ. Մարգարյանի հայտը՝ **որոշում եմ.**

1. «Պետական գույքի կառավարման կոմիտե» ՊՄ-ին տրամադրել նախագծման թույլտվություն Սևան համայնք, ք. Սևան, Կ. Դեմիրճյան փողոց թիվ 21 հասցեում գտնվող հողատարածքում գոյություն ունեցող դպրոցի քանդման և 1000 երեխայի համար նախատեսված դպրոցի կառուցման համար:
2. «Պետական գույքի կառավարման կոմիտե» ՊՄ-ը արտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հուլիսի 27
ք.Սևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

27 հուլիսի 2026 թվականի թիվ 1889-Ա

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ


Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով «ԼԻԼԵՅՔ» ՍՊԸ-ի տնօրեն Ն. Հարությունյանի հայտը՝ **որոշում եմ.**

1. «ԼԻԼԵՅՔ» ՍՊԸ-ին տրամադրել նախագծման թույլտվություն Սևան համայնք, ք. Սևան, Հանգստի գոտու 2-րդ փողոց թիվ 5 / 12 հասցեում մեկ վերգետնյա հարկով կաթսայատան կառուցման համար:
2. «ԼԻԼԵՅՔ» ՍՊԸ-ն պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հուլիսի 27
ք. Սևան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

27 հուլիսի 2026 թվականի թիվ 1890-Ա

ՊԱՏՎՈԳՐՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի պատվոգրով պարզևատրել՝

1) «Սևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ընտանեկան բժիշկ Նելլա Ալեքսանդրի Գաբրիելյանին՝ Սևանի տարածաշրջանի առողջապահության ոլորտում ունեցած զգալի ներդրման, առողջության առաջնային պահպանման օղակում անբասիր ու նվիրյալ աշխատանքի, 50-ամյա աշխատանքային գործունեության և ծննդյան 73 ամյակի առթիվ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հուլիսի 27
ք. Սևան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

27 հուլիսի 2026 թվականի թիվ 1891-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. N 2387-Ն, 18.05.2006թ. N 731-Ն որոշումներով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 3-րդ, 33-րդ կետերով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³ հոդվածով, հիմք ընդունելով քաղ. Արթուր Մարգարյանի դիմումը՝ իր կողմից՝ ք. Սևան, Խ. Աբովյան փողոցի թիվ 8 բնակելի տանը կից՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա 2008-2009թթ. ինքնական կառուցված 10.15քմ մակերեսով պարիսպները և 2020թ. կառուցված 19.16քմ մակերեսով ծածկն օրինականացնելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ դրանք կառուցված են համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա, որի նկատմամբ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներ չկան, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Արթուր Սուրիկի Մարգարյանի կողմից՝ ք. Սևան, Խ. Աբովյան փողոցի թիվ 8 բնակելի տանը կից՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա ինքնական կառուցված 10.15քմ մակերեսով պարիսպները և 19.16քմ մակերեսով ծածկը, զբաղեցրած ու սպասարկման համար նախատեսված 494.7քմ մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն, համապատասխանեցնել ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք-1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում Սևան քաղաքի լրամշակված գլխավոր հատակագծին՝ բնակավայրերի՝ նպատակային, բնակելի կառուցապատման՝ գործառնական նշանակության:
2. Քաղաքացի Արթուր Մարգարյանի կողմից՝ ինքնական կառուցված 10.15քմ մակերեսով պարիսպները և 19.16քմ մակերեսով ծածկը ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 2026NLDZ26/ տրամադրել՝ Սևան համայնք, ք. Սևան, Խ. Աբովյան փողոց թիվ 6 / 11 ծածկ հասցե:

3. Նկատի ունենալով, որ թույլ է տրվել ինքնակամություն, ուստի ինքնակամ կառույցի օրինականացման ծախսերն իրականացվում են ինքնակամ կառույցն իրականացնողի միջոցներով, պետական գրանցման, այդ թվում՝ համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05. 01. 2025թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերի ամբողջ գումարը քաղաքացու կողմից Սևան համայնքի բյուջե վերականգնելուց հետո:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հուլիսի 27
ք.Սևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

27 հուլիսի 2026 թվականի թիվ 1892-Ա

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Սևան համայնքի ավագանու՝ 18.11.2025թ N 125-Ն որոշման 1-ին կետով սահմանված թիվ 1 հավելվածի 7-րդ կետի ա) և բ) ենթակետերի, հիմք ընդունելով «Էմանուել Վահագն» ՍՊԸ - ի կողմից ներկայացված հայտը՝ **որոշում եմ.**

1. «Էմանուել Վահագն» ՍՊԸ-ին / գործունեությունը՝ ք. Սևան, Սայաթ-Նովա փողոց թիվ 9/ 1-2-23 11 հասցե/ տրամադրել 2026թվականի 1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակների համար՝
- 1) ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն՝ Սևան համայնքի բյուջեի 900165101354 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք՝ 25.100 դրամ, յուրաքանչյուր եռամսյակի համար;
- 2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն՝ Սևան համայնքի բյուջեի 900165101339 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք՝ 25.100 դրամ, յուրաքանչյուր եռամսյակի համար :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առձեռն կամ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2026 թվականի հուլիսի 27
ք.Սևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ


28 հուլիսի 2026 թվականի թիվ 1893-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. N 731-Ն որոշումով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 26, 27 կետերով և հիմք ընդունելով քաղ. Գոռ Փանոսյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Գրիբոյեդովի փողոցի 12 / 51 հասցեում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքի բնակարանում սեփականատիրոջ կողմից ինքնական կատարված ներքին ձևափոխման աշխատանքները օրինականացնելու մասին, հաշվի առնելով, որ շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Սեփականության իրավունքով Գոռ Փանոսյանին պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Գրիբոյեդովի փողոց, թիվ 12 հասցեում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքի 51 բնակարանում՝ սեփականատիրոջ կողմից ինքնական կատարված ներքին ձևափոխման աշխատանքները ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 2026VWWVBC/՝ համայնքի բյուջե մուծելով յուրաքանչյուր ձևափոխված պատուհանի /2 հատ/ և դռան /8 հատ/ համար՝ 1969 դրամ:
2. Սույն որոշման ընդունման օրվանից սահմանված գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում՝ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հուլիսի 28
ք.Սևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

28 հուլիսի 2026 թվականի թիվ 1894-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³ հոդվածով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք-1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագիծը՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 0.63511հա մակերեսով հողամասը /ք. Սևան/ ճանաչել համայնքային սեփականություն, համապատասխանեցնել ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք-1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագծին, տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Օղակաձև փողոց թիվ 2 հողամաս հասցե:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05. 01. 2026թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հուլիսի 28
ք.Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

28 հուլիսի 2026 թվականի թիվ 1895-Ա

**ԱՌԵՎՏՐԻ ՍՐԱՀՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՆԵՐՔԻՆ
ՁԵՎԱՓՈԽՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ
ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. էդգար Հարությունյանի դիմումը՝ Սևան համայնք ք. Սևան, Սայաթ-Նովայի փողոց թիվ 4 / 9 հասցեում գտնվող առևտրի սրահում կատարված ներքին ձևափոխման աշխատանքներն օրինականացնելու մասին, հաշվի առնելով, որ անշարժ գույքը գտնվում է ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներ չունեցող հողատարածքի վրա, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, **որոշում եմ.**

1. Սեփականության իրավունքով էդգար Հրաչիկի Հարությունյանին պատկանող, Սևան համայնք ք. Սևան, Սայաթ-Նովայի փողոց թիվ 4 / 9 հասցեում գտնվող 284.67քմ մակերեսով երկհարկանի առևտրի սրահում կատարված ներքին ձևափոխման աշխատանքները ճանաչել օրինական:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հուլիսի 28
ք.Սևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

28 հուլիսի 2026 թվականի թիվ 1896-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 19-Ի N 1545-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

- Սևան համայնքի ղեկավարի՝ 2026 թվականի հունիսի 19-ի «Ինքնակամ կառուցված շինությունն օրինականացնելու և համայնքային սեփականություն ճանաչելու մասին» N 1545-Ա որոշման 2-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունը՝
 - 1) «/հաշվառման տեղեկանք՝ 2026TAZANP/» բառերի փոխարեն կարդալ «/հաշվառման տեղեկանք՝ 2023KYLUSJ /» բառերը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հուլիսի 28
ք.Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

28 հուլիսի 2026 թվականի թիվ 1897-Ա

**ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ
ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 27.04.2006թ. թիվ 844-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության՝ 26.05.2016թ. N 550-Ն որոշմամբ, հիմք ընդունելով քաղ. Թորգոմ Սաղաթեյանի լիազոր անձ Արմեն Սաղաթեյանի դիմումը՝ սեփականության իրավունքով Թորգոմ Սաղաթեյանին պատկանող, Սևան համայնք, գ. Գագարին, Մարշալ Բաղրամյան փողոց թիվ 1 / 51 հողամաս հասցեում անշարժ գույքի /վկայական՝ 27112023-05-0019/ զբաղեցրած 0.06608 հա մակերեսով հողատարածքն ընդլայնելու մասին, հաշվի առնելով, որ նշված հողատարածքը չի հանդիսանում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողատարածք, **որոշում եմ.**

1. Սեփականության իրավունքով Թորգոմ Արամի Սաղաթեյանին պատկանող, Սևան համայնք, գ. Գագարին, Մարշալ Բաղրամյան փողոց թիվ 1 / 51 հողամաս հասցեում գտնվող անշարժ գույքի զբաղեցրած 0.06608 հա մակերեսով հողատարածքն ընդլայնել 0.066 հա մակերեսով /հասցե՝ Սևան համայնք, գ. Գագարին, Պիոներների փողոց թիվ 2 /1 հողամաս, վկայական՝ 24072026-05-0052/ ուղղակի վաճառքի կարգով օտարելով Թորգոմ Արամի Սաղաթեյանին հողի կադաստրային արժեքը՝ 1քմ՝ 1221 դրամ, վճարելու պայմանով:
2. Սույն որոշումը ենթակա է հողի պետական գրանցման հողի կադաստրային արժեքը մոծելուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հուլիսի 28
ք.Սևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

28 հուլիսի 2026 թվականի թիվ 1898-Ա

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով քաղ. Սուսաննա Հարությունյանի հայտը՝ **որոշում եմ.**

1. Սուսաննա Հարությունյանին տրամադրել նախագծման թույլտվություն Սևան համայնք, ք. Սևան, Սունդուկյան փողոց թիվ 32 հասցեում գոյություն ունեցող խորդանոցի և առանձնատան քանդման և բնակելի տան կառուցման համար:
2. Սուսաննա Հարությունյանը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հուլիսի 28
ք.Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

28 հուլիսի 2026 թվականի թիվ 1899-Ա

**ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով քաղ. Առնակ Գրիգորյանի հայտը՝ **որոշում եմ.**

1. Առնակ Գրիգորյանին տրամադրել նախագծման թույլտվություն Սևան համայնք, ք. Սևան, Հ. Այվազովսկու փողոց թիվ 7 հասցեում բնակելի տան, տնտեսական շինության և պարսպի կառուցման համար:
2. Առնակ Գրիգորյանը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հուլիսի 28
ք. Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

28 հուլիսի 2026 թվականի թիվ 1900-Ա

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1- ին մասի 12-րդ կետի, Սևան համայնքի ավագանու՝ 2025 թվականի նոյեմբերի 18 - ի թիվ N125-Ն որոշման 1-ին կետով սահմանված 1 հավելվածի 12-րդ կետի դ) ենթակետի հիմք ընդունելով «Իմիջ Մ. Գ. » ՍՊԸ -ի տնօրենի հայտը՝ **որոշում եմ.**

1. «Իմիջ Մ. Գ. » ՍՊԸ-ին / գործունեությունը՝ ք. Սևան, Նաիրյան փ. /Վայլդբերիս - Այլ գովազդ/ / տրամադրել 01.08.2026թ.-31.08.2026թ. ժամանակահատվածի համար՝ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության՝ Սևանի համայնքի բյուջեի 900165101503 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք՝ 54.000 դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առձեռն կամ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հուլիսի 28
ք.Սևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

28 հուլիսի 2026 թվականի թիվ 1901-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հոդային օրենսգրքի 3-րդ հոդվածով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. N 2387-Ն, 18.05.2006թ. N 731-Ն որոշումներով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 3-րդ, 33-րդ կետերով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³ հոդվածով, հիմք ընդունելով քաղ. Վահագ Ռաֆիկի Հարությունյանի դիմումը՝ Սևան համայնք, ք. Սևան, Էներգետիկների փողոցի ծախսակողմյան հատվածում՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա ինքնակամ կառուցված 24.42 քմ մակերեսով ավտոտնակը օրինականացնելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ շինությունը կառուցված է համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա, որի նկատմամբ ՀՀ Հոդային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներ չկան, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**


1. Վահագ Հարությունյանի կողմից՝ Սևան համայնք, ք. Սևան, Էներգետիկների փողոցի ծախսակողմյան հատվածում՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա ինքնակամ կառուցված 24.42 քմ մակերեսով ավտոտնակը /ներքին մակերեսը՝ 23.04 քմ/ և զբաղեցրած 28.15 քմ մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն:
2. Վահագ Հարությունյանի կողմից ինքնակամ կառուցված 24.42 քմ մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 2026FBXWTR/ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Նալբանդյան փողոց թիվ 67 / 51 ավտոտնակ հասցե:
3. Նկատի ունենալով, որ թույլ է տրվել ինքնակամություն, ուստի ինքնակամ կառույցի օրինականացման ծախսերն իրականացվում են ինքնակամ կառույցն իրականացնողի միջոցներով, պետական գրանցման, այդ թվում՝ համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05. 01. 2026թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:

4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերի ամբողջ գումարը քաղաքացու կողմից Սևան համայնքի բյուջե վերականգնելուց հետո:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հուլիսի 28
ք.Սևան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

28 հուլիսի 2026 թվականի թիվ 1902-Ա

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Սևան համայնքի ավագանու՝ 18.11.2025թ. N 125-Ն որոշման 1-ին կետով սահմանված թիվ 1 հավելվածի 7-րդ կետի ա) և բ) ենթակետերի, հիմք ընդունելով «Կակաչ» ԱԿ -ի կողմից ներկայացված հայտը՝ **որոշում եմ.**

1. «Կակաչ» ԱԿ -ին / գործունեությունը՝ ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 175 հասցե / տրամադրել 2026թ. 3-րդ և 4-րդ եռամսյակների համար՝
 - 1) ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն՝ Սևան համայնքի բյուջեի 900165101354 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք՝ 13.100դրամ՝ յուրաքանչյուր եռամսյակի համար;
 - 2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն՝ Սևան համայնքի բյուջեի 900165101339 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք՝ 13.100 դրամ՝ յուրաքանչյուր եռամսյակի համար :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առձեռն կամ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2026 թվականի հուլիսի 28
ք.Սևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

28 հուլիսի 2026 թվականի թիվ 1903-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԵՓԱԿԱՆ ԳՈՒՅՔ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, 10.06.2008թ. ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով, ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Ռոբերտ Հարությունյանի դիմումը՝ Հայկական ՍՍՀ Ժողովրդական դեպուտատների Սևանի շրջանային սովետի գործադիր կոմիտեի՝ 31.03.1989թ. նոյեմբերի 3-ի նիստի որոշուման համաձայն՝ Ռոբերտ, Սուսաննա, Թեհմինե, Սևակ և Հովհաննես Հարությունյաններին հատկացված 1200քմ մակերեսով հողատարածքում մինչև 2001թ. մայիսի 15-ը կառուցված բնակելի նշանակության շինությունները սեփական գույք ճանաչելու մասին, նկատի ունենալով, որ դրանք չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, որոնց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Հայկական ՍՍՀ Ժողովրդական դեպուտատների Սևանի շրջանային սովետի գործադիր կոմիտեի՝ 31.03.1989թ. նոյեմբերի 3-ի նիստի որոշուման համաձայն՝ Ռոբերտ Հովհաննեսի Հարությունյանին /ծնված՝ 12.02.1960թ./, Սուսաննա Գարսևանի Հարությունյանին /ծնված՝ 15.06.1960թ./, Թեհմինե Ռոբերտի Հարությունյանին /ծնված՝ 04.02.1984թ./ Սևակ Ռոբերտի Հարությունյանին /ծնված՝ 17.04.1985թ./, Հովհաննես Ռոբերտի Հարությունյանին /ծնված՝ 31.08.1986թ./ պատկանող Վարսեր բնակավայրում անհատական բնակելի տան կառուցման համար հատկացված 1200քմ մակերեսով հողատարածքին կից գտնվող 240քմ մակերեսով հողատարածքի նկատմամբ ճանաչել Ռոբերտ, Սուսաննա, Թեհմինե, Սևակ և Հովհաննես Հարությունյանների սեփականության իրավունքը:
2. Ռոբերտ, Սուսաննա, Թեհմինե, Սևակ և Հովհաննես Հարությունյանների հատկացված 1440քմ մակերեսով հողատարածքում 1989թ. կառուցված երկհարկանի բնակելի տունը՝ 1-ին հարկ՝ 167.50քմ մակերեսով /ներքին մակերեսը՝ 135.15քմ/, 2-րդ հարկ՝ 166.47քմ մակերեսով /ներքին մակերեսը՝ 122.30քմ/, 15.39քմ մակերեսով հարթակը և 16.41քմ մակերեսով պատշգամբը ճանաչել օրինական՝ տրամադրելով Սևան համայնք, գ. Վարսեր, 11-րդ փողոց թիվ 46 բնակելի տուն հասցե:

3. Ռոբերտ, Սուսաննա, Թեհմինե, Սևակ և Հովհաննես Հարությունյաններին պատկանող 1440քմ մակերեսով հողատարածքին կից գտնվող 967.7քմ մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն, տրամադրել Սևան համայնք, գ. Վարսեր, 11-րդ փողոց թիվ 46 / 1 հողամաս հասցե, ուղղակի վաճառքի կարգով, հողի կադաստրային արժեքի 30% վճարելու պայմանով /1քմ՝237.6դրամ/ օտարել Ռոբերտ, Սուսաննա, Թեհմինե, Սևակ և Հովհաննես Հարությունյաններին:
4. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05. 01. 2026թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
5. ույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հուլիսի 28
ք.Սևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

28 հուլիսի 2026 թվականի թիվ 1904-Ա

ԱՌԱՆՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄՆԱՑԱԾ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԹՎԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՁԻ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Ընտանեկան օրենսգրքի 109-րդ հոդվածով, «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» օրենքի 2-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2016 թվականի հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշմամբ հաստատված խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության 8-րդ կետի 3-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2006 թվականի հունիսի 22-ի թիվ 962-Ն որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմից ստացված N 021/6413-2026 և «ՍՕՍ մանկական գյուղեր» ՀԲՀ ԾՔԻ «Կոտայք մասնաճյուղից ստացված N 90-Գ գրությունները՝ «ԱԾԽՄ երեխաների խնամքի ապահովումը ընտանեկան միջավայրին առավել մոտ սոցիալ-կենցաղային պայմաններում» ծրագրով խնամք ստացած Մոնիկա Հովհաննեսի Հարությունյանի (ծնված՝ 02. 01. 2008թ) ծրագրից դուրս գրվելու փաստը, **որոշում եմ.**

1. ՀՀ Կոտայքի մարզի Ակունք բնակավայրում հաշվառված, ՀՀ Գեղարքունիքի մարզի Լճաշեն բնակավայրում փաստացի բնակվող Մոնիկա Հովհաննեսի Հարությունյանին (ծնված՝ 02. 01. 2008թ) վերցնել սկզբնական հաշվառման՝ որպես ժամանակավոր առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող:
2. Սևանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը՝ հետագա գործընթացը կազմակերպելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հուլիսի 28
ք.Սևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

28 հուլիսի 2026 թվականի թիվ 1905-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. N 731-Ն որոշմամբ, 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 9-րդ, 10-րդ, 18-րդ կետերով և 11-րդ կետի գ) ենթակետով, հիմք ընդունելով Սեյրան Սերյոժայի Նավասարդյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Գործարանային փողոց թիվ 1 / 53 հասցեում գտնվող 0.05915 հա մակերեսով հողատարածքում սեփականատիրոջ կողմից ինքնակամ կատարված շինարարական աշխատանքներն օրինականացնելու մասին, հաշվի առնելով, որ շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Սեփականության իրավունքով Սեյրան Նավասարդյանին պատկանող, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Գործարանային փողոց թիվ 1 / 53 հասցեում գտնվող հողատարածքում սեփականատիրոջ կողմից 2020թ. ինքնակամ կառուցված 20.46 քմ մակերեսով կաթսայատան /ներքին մակերեսը՝ 14.12քմ/, երկհարկանի կաթսայատան՝ 1-ին հարկ՝ 37.92 քմ մակերեսով /ներքին մակերեսը՝ 29.34 քմ/, 2-րդ հարկ՝ 37.92 քմ մակերեսով /ներքին մակերեսը՝ 29.44 քմ/ և 3.36 քմ պարսպի կառուցման աշխատանքները ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 2026EZPZBC/՝ համայնքի բյուջե մուծելով յուրաքանչյուր օրինականացվող 1քմ շինության համար՝ 1673 դրամ:
2. Սույն որոշման ընդունման օրվանից սահմանված գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում՝ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2026 թվականի հուլիսի 28
ք.Սևան



ՍԱՌԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

28 հուլիսի 2026 թվականի թիվ 1906-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԵՓԱԿԱՆ ԳՈՒՅՔ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

